յառաջանար: Առանց դանդաղելու վազեց ելաւ Յովնան կիսակործան պատին վբայ, եւ մեծ ձայնով, որ ձիերուն սաըասմդակ շառաչմանը յաղթանակեց, գոչից յանկարծ եւ ամէն արշաւանք կարկամեցաւ.

«Սբատ Սպարապետ Հայոց, ո՞ր այսպէս կ'երթաս, սխալ է այդ քու ճամփան, թշնամեաց գիրկը զքեզ կը տանի, ինչպէս տարաւ Բագարատ քու եղբայրդ: Ո՛վ նախարարք, ո՛վ ազատագունդք, հայոց, մինչեւ ե՞րբ այսպէս միամտութեան եւ վատութեան ձեր անձը, ձեր ազգը, ձեր երկիրը, ձեր հաւատը պիտի զոհէք, մինչեւ ե՞րբ այդ իմաստութիւն կարծուած յիմարութեան պիտի հէ տեւիք: Ափսո՛ս, հազար ափսոս, դուք անձամբ կ'երթաք զձեզ մատնելու անօրինաց ձեռքը. եթէ միայն զձեզ մատնէի՛ք, գիտէ՞ք ուր կը տանի զձեզ ձեր անձանց մատնութիւնը՝ կը տանի մինչեւ դաւաճանութեան ձեր ազգին, կըսէ զձեզ անարգ ստրուկ եւ գործակից Բուղայի, եւ ձեզի վարձք փոխարէն վաստակոց շղթայներ կը սպասեն եւ բանտ, երբ մայրն Հայաստան բոլորովին ճնշեալ, վատթարացեալ եւ չքացեալ լայնատարած գերեզման մը պիտի կազմէ եւ ողբա ոչ միայն իւր զաւկներու դիականց եւ շղթաներու վրայ, այլ նաեւ մանաւանդ այն զաւկներուն վրայ, որ արբանեակ եղան իւր դահիճներուն եւ մատնիչ իրենց եղբարց»:

Այդ մեծ ձայնը գիշերուան լռութեան մէջ՝ այդ աւերակաց վրայեն սասանելուց Սմբատ:

— Ո՞վ ես դու, մա՛րդ,— ըսաւ,— չարագուշակ մարգարէ, որ ամէն բարի փափագները ի շար փոխարկեալ կը տեսնես, ամէն քայլափոխ վատ կը մեկնես, իբրեւ թէ դու միայն քու ազգդ սիրէիր, եւ ամէն հայ մատնիչ լինէր եւ դաւաճան իւր ազգին, միայն դու տեսար նորա թշուառութիւնը եւ ցաւեցար, եւ Սմբատայ սրտեն արիւն չի՞ հոսիր միթէ այղ սոսկալի պատուհասին, որ մեր վրայ հասեալ է:

— Եթէ ճշմարտապէս ազգդ կը սիրես, մ'երթար Խլաթ, մ'երթա՛ր Բուղայի. հոն կայ մահ բունեաղ ոչ քու անձիդ, ոչ քու տոհմիդ միայն, այլ բոլոր հայ ազգին, դարձու այս քաշերը, զինէ սոցայ ձեռքը